Սիրելի՛ բարեկամներ, հարգելի՛ հիւրեր, բարի եկաք:
Haval u hogırno em hami kher hatın [քրդերեն].

Այսօր լրանում է իմ սիրելի Ջութակի 71-ամյակը, ում հանդեպ կարոտն ավելի ուժգին է, քան հենց կյանքինը:

Բոլորս բարի ենք եկել Հրանտ Դինքի անվան միջազգային մրցանակաբաշխության արարողությանը, որտեղ մենք, ի հիշատակ նրա, տոնում ենք նրա կյանքն ու պայքարը, ինչպես նաև բոլոր նմանատիպ պայքարները:

Սիրելի՛ ընկերներ,

Այս տարի ևս մեր աշխարհը պարուրաձև պտտվում է պատերազմների, կանանց և երեխաների սպանությունների շուրջ: Պատերազմներին վերջ չտվեցին: Չարիքն ու մահը իրենց ողջ ուժով տիրում են աշխարհին: Մահն այլևս պայմանավորված չէ միայն հիվանդությամբ կամ զառամյալ տարիքի հետ. նորածիններն անգամ զոհ են դառնում՝ հանուն շահի: Անկախ նրանից, թե սպանողը պետությունն է, մեծահասակները, թե երեխաները՝ նրանք իրենց արարքը հպարտությամբ են ներկայացնում, անգամ՝ ուրախությամբ: Տրամաբանության մեջ չի տեղավորվում:

Եվ ցավի հետ գալիս է անպատժելիությունը, որ ավելի է խոցում մեր հոգիները: Այս տարի մենք ստիպված էինք հաշվի նստել այն մթնոլորտի հետ, որը սնել էր Մաթթիա Ահմեդ Մինգուցցիին շուկայում վայրագորեն սպանած երիտասարդներին:

Այսօր մեր երեխաները կանգնած են տարբեր պայքարների առաջ. մի կողմից՝ երեխաներ, որ սպանվում են, մյուս կողմից՝ երեխաներ, որոնք դառնում են մարդասպաններ, բայց կան նաև երեխաներ, որ անարդար կերպով բաժանվում են իրենց ծնողներից՝ այսպես կոչված «արդարադատության» հիմքերով:

Անցած տարի այս դահլիճում իրավունքների պայքարի համար բուռն ծափերով ողջունողների մեջ էր նաև հենց այս տարածաշրջանի՝ Ճիշլիի ընտրված քաղաքապետը՝ Ռեսուլ Էմրահ Ճահանը: Այսօր նա ճաղավանդակների ետևում է: Նրա հնգամյա դուստրը սպասում է, որ հայրը կվերադառնա: Դեմիրթաշի փոքր աղջիկները տարիներ շարունակ սպասում են, որ իրենց հայրը տուն վերադառնա: Հիմա նրանք արդեն դեռահաս են...

Մի՞թե մեղք չէ այն, որ այդ տարիքի երեխաները ստիպված են մեծանալ առանց հայրերի: Մի՞թե դա նրանց փոքրիկ սրտերի հանդեպ դաժան արարք չէ: Մի՞թե մյուսներն իրենց բաժինը չունեն այդ անարդարության մեջ: Մի՞թե դա անխճություն չէ: Ի՞նչ տիպի խիղճ է սա, ի՞նչ տիպի արդարության հասկացություն է սա:

Ինչպիսի՞ ապագա ենք մենք կերտում:

Մի կողմից՝ անպատժելիություն, մյուս կողմից՝ անմեղության կանխավարկածի խախտում... Բանտարկել՝ առանց ապացույցների, ազատ արձակել՝ չնայած առկա ապացույցների:

Արդարադատության համակարգ, որ ազատ արձակելով մարդասպաններին՝ միևնույն ժամանակ բանտարկում է մեր սիրելի Չիղդեմին, Օսման Քավալային և ընտրված քաղաքապետներին: Համակարգ, որը ճիշտ է համարում Օսման Քավալային պատժի ենթարկելը, չնայած որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հաստատել էր, որ դրա համար ապացույցներ չկան:

Ոչ ոք՝ անգամ քվե ստացած մարդիկ, անձեռնմխելի չեն հանցանքներ կատարելու պարագայում, և չպետք է լինեն: Բայց եթե դու ձերբակալում ես բազմաթիվ լրագրողների, ուսանողների, ընտրված պաշտոնյաների՝ առանց օրինական գործընթացի, ազատազրկումը որպես պատժի միջոց կիրառելով, դու կորցնում ես թե՛ արժանահավատությունը, թե՛ վստահությունը: Բանտարկել աշխարհի ամենախոշոր քաղաքներից մեկի ընտրված քաղաքապետին՝ առանց հանրությանը համոզիչ փաստարկներ ներկայացնելու, բայց ավելի ճիշտ՝ առանց հանրությանը համոզելու որևէ փորձի՝ մարդու իրավունքների խախտում է:

Կարիք չկա, որ այս կամ այն կուսակցությանը հարենք: Օրենքի գերակայությունը տարածվում է բոլորիս վրա: Որտեղ օրենք չկա, այնտեղ անապահովությունն է տիրում: Անկարգություններ, քաոս, անհանգիստություն, սարսափ՝ սրանք են տիրում: Բռնությունը, բուլինգը, զայրույթը, վրդովմունքն ու ատելությունը գնալով շատանում են: Ոչ ոք չգիտի՝ ում ձեռքն ում գրպանում է:

Այո, մենք բոլորս այնքան կարիք ունենք արդարության, որքան որ ջրի կամ օդի կարիք ունենք: Եթե ուժեղները արդար չեն, ապա ամենաշատը թույլերն են տուժում: Աստվածաշունչն ասում է. «Սովորեցեք բարություն անել, իրավունք որոնեցեք, ուղղություն ցույց տվեք զրկվածին, որբի դատը տեսեք, որբևայրիի դատը պաշտպանեցեք»: Եվ ո՞վ է որ պետք է այս ամենն անի, եթե ոչ դատախազները, դատավորները և իշխանավորները:

Նրանք խոսում են խաղաղության գործընթացներից, բայց չէ՞ որ խաղաղության հիմքը հենց արդարադատությունն է: Իսկ ի՞նչ է արդարադատությունը: Այն ճշմարտությունն է:

Բայց երբ որ ճնշողը պետությունն է՝ հենց կառավարությունը, ո՞վ կարող է նրան պատասխանատվության ենթարկել: Ոչ ոք: Միայն եթե նա ապաշխարի, ընդունի իր մեղքը, հրաժարվի բռնապետությունից, ժխտումը խոստովանության փոխի և խոստանա, որ այլևս չի կրկնի... Սկսի ինքն իրեն դատելուց: Այստեղ Հիսուսի

խոսքերն են միտքս գալիս. «Ողորմություն եմ կամենում, ոչ թե զոհ»: Ոչ թե ծես դարձած արդարություն, ոչ թե ձևական ժեստեր, այլ սրտի իրական ապաշխարություն, իրական ողորմություն: Թափանցիկությունն ու ազնվությունը պետք է արդարության առանցում լինեն: Մտաբերեք «Շաբաթօրյա մայրերին», որ 2013 թ. արժանացան Հրանտ Դինքի անվան միջազգային մրցանակին... Նրանց սիրելիները, որ անհետ կորածներ, ճնշման և զրկանքների ենթարկվածներ են, նրանց գտնվելու վայրը մինչև հիմա անհայտ է: Միայն վերջերս հրաժեշտ տվեցինք մայր Էմինե Օջաքի կյանքին: Իրական մեղավորները հիմա պետք է որ ամոթ զգան: Սակայն կզգա՞ն արդյոք: Եկեք հարցնենք: Կամ մի՞թե սա ուղղակի խաղ է: Նրանց երբևէ դատարանի առաջ կկանգնեցնե՞ն:

Կառավարության նշանակած այս բոլոր հոգաբարձուները... Ինչպիսի՞ արդարադատություն նրանք կարող են անել: Ինչպիսի՞ լուծում նրանք կարող են առաջարկել, ո՞ր գործընթացին, ո՞ր խնդրին: Արդարադատության մոմը մի՞թե իսպառ կմարի, թե՞ դրա կրակն ավելի պայծառ կվառվի՝ ցրելով խավարը: Թող որ լույսը տիրի: Թող որ մեր երկրի վրա գա թեթևություն, խաղաղություն և անվտանգություն: Թող որ ուրախություն գա, բարգավաճում լինի: Թող որ ճշմարտությունը հաստատվի, ազնվությունը տիրի, սերն ու ներումը բազմանան:

Մեր՝ արդարության համար ունեցած փափագը նաև սիրելի Հրանտի՝ Թուրքիայի և Հայաստանի միջև խաղաղություն հաստատելու ջանքերի առանցքում էր: Իր խոսքերով ու գրվածքներով նա ձգտում էր դառնալ արահետ՝ նպաստելով հարաբերությունների կառուցմանը և փակ սահմանների բացմանը: Որպես Հրանտ Դինք հիմնադրամ՝ մենք անում ենք ամեն ինչ՝ շարունակելու այդ առաքելությունը՝ ժողովուրդների միջև կապերն ամրապնդելու նպատակով: Այսօր, երբ Ամերիկայում ստորագրվել է խաղաղության ճանապարհին վերաբերող համաձայնագիր, որը նոր շունչ է հաղորդում փակ սահմանի համատեքստում, մենք ունենք մի ցանկություն. թող որ Թուրքիան Հայաստանի հետ հարաբերություններում իր ցուցաբերած կառուցողական և դրական նախաձեռնություններին տա իրական բովանդակություն: Ինչպես Հրանտն էր ասում. «Նոր մոտեցումը պետք է իր հետ բերի նոր և կարեկցող լեզու» («Ակօս», 2005 թ., հուլիսի 15): Եվ այս երեկո ուզում եմ խորին շնորհակալություն հայտնել մեր ընկերներին՝ Երևանից, որ միացել են մեզ երաժշտությամբ՝ այս կամրջի վրա դնելով ևս մեկ աղյուս:

Շնորհակալություն յուրաքանչյուրիդ, որ այսօր մեզ հետ եք, ինչպես նաև շնորհակալություն, որ մեզ հետ կիսվում եք հույսով: